**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-9/8-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** 26 -ը մայիսի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Դիլանյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **28.02.2020թ**. կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/8-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***19,881,880 (տասնինը միլիոն ութ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131 |
| ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1930048363450100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02621803 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Ա. ԴԻԼԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/8-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ. ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ |
| 11. | Գլյուտարալդեհիդ պարունակող սառը մանրէազերծման նյութ բժշկական գործիքների համար - Սայդեքս | լիտր | 1,800 | 1,900 | 3,420,000 | 1800 | | |
| 12. | Օրթոֆտալատալդեհիդ պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքի համար Սայդեքս ՕՊԱ | լիտր | 1,000 | 7,060 | 7,060,000 | | 500 | 500 |
| 13. | Ֆերմենտների կոմպլեքս պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքավորման համար Սայդեզիմ էքստրա | լիտր | 433.2 | 10,900 | 4,721,880 | | 433.2 | |
| 15. | Վիրահատական դաշտի (մաշկի) ախտահանման հեղուկ - Օկտենիդերմ | լիտր | 600 | 7,800 | 4,680,000 | | 600 | |
| **Ընդամենը** | | | | | **19,881,880** | | | |

Հավելված 1-ով սահմանված 1-ին անվանատողի ապրանքատեսակից 1800 լիտրը մատակարարվել է 13.03.2020թ.-ին, իսկ 4-րդ անվանատողի ապրանքատեսակից 600 լիտրը՝ 03.04.2020 թ.-ին՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 20.03.2018թ. Պ-3 պաշտոնական պարզաբանման Հարց 1-ի Պարզաբանում 2-րդ կետի բ ենթակետի՝ «Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը վաճառողի կողմից ապրանքի մատակարարման, կատարողի կողմից մատուցված ծառայության, կապալառուի կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում»

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈՒԶՅԱՆ | Ս. ՊԻՒՆՅԱՆ |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/8-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 11. | **Ախտահանիչ հեղուկ նյութեր/** Գլյուտարալդեհիդ պարունակող սառը մանրեզերծման նյութ բժշկական գործիքների համար - Սայդեքս / | 24451141/522 | 3,420,000 | 3,420,000 | 3,420,000 | 3,420,000 | 3,420,000 | 3,420,000 | 3,420,000 | 3,420,000 | 3,420,000 |
| 12. | **Ախտահանիչ հեղուկ նյութեր/** Օրթոֆտալատալդեհիդ պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքի համար Սայդեքս ՕՊԱ / | 24451141/523 | 7,060,000 | 3,530,000 | 3,530,000 | 7,060,000 | 7,060,000 | 7,060,000 | 7,060,000 | 7,060,000 | 7,060,000 |
| 13. | **Ախտահանիչ հեղուկ նյութեր/** Ֆերմենտների կոմպլեքս պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքավորման համար Սայդեզիմ էքստրա / | 24451141/524 | 4,721,880 | 4,721,880 | 4,721,880 | 4,721,880 | 4,721,880 | 4,721,880 | 4,721,880 | 4,721,880 | 4,721,880 |
| 15. | **Հականեխիչ (անտիսեպտիկ) հեղուկներ/** Վիրահատական դաշտի (մաշկի) ախտահանման հեղուկ - Օկտենիդերմ / | 33621643/506 | 4,680,000 | 4680000 | 4680000 | 4,680,000 | 4,680,000 | 4,680,000 | 4,680,000 | 4,680,000 | 4,680,000 |
| **Ընդամենը** | | | **19,881,880** | **16,351,880** | **16,351,880** | **19,881,880** | **19,881,880** | **19,881,880** | **19,881,880** | **19,881,880** | **19,881,880** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԳԻԼԱՆՅԱՆ

«ИНТЕРМЕД ГРУП» «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» «INTERMED GROUP» 02621803